ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0024, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26/1

«____» _____ 2022թ.

Հ _____

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ

տնօրեն Ռ. ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

ՀՎՀՀ 08622542

Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ, ԳՆժդեհի փ, շ.103/26

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հանրապետության նախագահի աշխատակազմի և Ձեր ընկերության միջև 19.08.2020թ.-ին կնքված ՀՆԱ-ԳՀԱՇՁԲ-20/74 ծածկագրով «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման» պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի հոկտեմբերի 5-ը: Այդ ժամկետի ավարտին պայմանագրով նախատեսված աշխատանքը Ձեր ընկերության կողմից չի կատարվել: Ձեր ընկերության կողմից խախտվել է պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալը պայմանագրի 3.1.2 կետի համաձայն սահմանել է աշխատանքի կատարման նոր ժամկետ՝ 2020 թվականի հոկտեմբերի 20-ը, որի մասին Ձեզ տեղեկացվել է 10.10.2020թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված գրությամբ: Սահմանված նոր ժամկետում ևս Ձեր ընկերության կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքը ամբողջությամբ չի կատարվել:

20.11.2020թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով Ձեզ է տրամադրվել այն աշխատանքների անվանումները և ծավալները, որոնք չեն կատարվել կամ կատարվել են

թերություններով և համարվում են չկատարված: Միաժամանակ Ձեզ առաջարկվել է մինչև 2020 թվականի նոյեմբերի 23-ը ներառյալ ավարտել աշխատանքները և վերացնել թերությունները: Սակայն ոչ մի քայլ չեք ձեռնարկել, և ի պատասխան այդ գրությանը՝ կրկին ներկայացրել եք անհիմն պատճառաբանություններ և աշխատանքը կատարելու համար անընդունելի և ոչ իրավաչափ պայմաններ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի այն աշխատանքները, որոնք Ձեր ընկերության կողմից ամբողջությամբ կատարվել են, Հանրապետության նախագահի աշխատակազմի կողմից ընդունվել են և դրանց դիմաց վճարվել է: Պայմանագրով նախատեսված որևէ այլ առանձին տեսակի աշխատանքներ Ձեր ընկերության կողմից ամբողջական չեն կատարվել և վերջնական արդյունք Հանրապետության նախագահի աշխատակազմին չի հանձնվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի «բ» և «դ» ենթակետերը՝ Հանրապետության նախագահի աշխատակազմը 2020 թվականի նոյեմբերի 24-ին մասնակի՝ 2,311,125.9 (երկու միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար հարյուր քսանհինգ ամբողջ ինը տասնորդական) ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծում է պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում ենք, որ Ձեր ընկերության կողմից պայմանագրի և որակավորման ապահովումների համար ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը համապատասխան վճարման պահանջագրերով ներկայացվում է Ձեր ընկերությանը սպասարկող բանկին, իսկ Ձեր ընկերության տվյալները ուղարկվում է լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով:

Հանրապետության Նախագահի
աշխատակազմի ղեկավարի տեղակալ

[redacted]

Խ. ՊՈՂՈՍՅԱՆ

24.11.2020